Հայտարարություն

<<ՀՀ Արագածոտնի մարզի Կարինի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրինությունը հայտարարում է մրցույթ՝ ինֆորմատիկայի (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթը անց է կացվում երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլը անց է կացվում՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցը անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափի,

2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3) անձը հաստատող փաստաթուղթ,

4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

5) ինքնակենսագրություն (Ձև 5),

6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև մայիսի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00-ից – 15.00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից : Մրցույթը տեղի կունենա մայիսի 20-ին՝ ժամը 15.00-ին , ՀՀ Արագածոտնի մարզի Կարինի միջնակարգ դպրոցում: Հասցեն՝ Արագածոտնի մարզ, գ. Սասունիկ, Կարին թաղ. 12, 4/1: Տեղեկությունների համար զանգահարել՝ 077-00-31-40 հեռախոսահամարով: